

ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Հաշմանդամության/ խնդրի տեսակը	Գործողությունները	Գործողությունների պատճառները

1. Ո՞վ է իրավասու և (կամ) պատասխանատու սովորողներին աջակցելու հարցում:
2. Գործո՞ւմ է արդյոք ուսուցիչների աջակցության հատուկ մասնագիտական թիմ ձեր դպրոցում:
3. Որո՞նք են այն լուծումները, որոնք սովորողներին կօգնեն լավագույնս բավարարել իրենց ուսումնական կարիքները:
4. Սովորողների խնդիրների լուծման կամ հասցեագրման ի՞նչ միջոցներ են առկա ձեր դպրոցում (դասարանում):
5. Ի՞նչ աջակցող տեխնոլոգիաներ եք օգտագործում:
6. Մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբ ի՞նչ մարտավարություններ կարող եք իրականացնել ձեր դպրոցում (դասարանում):
7. Որո՞նք են ձեր դպրոցի (դասարանի) առնչությամբ ձեր առջև ծառայած մարտահրավերները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

- Երբևէ ունեցե՞լ եք աշակերտներ սոցիալապես անապահով ընտանիքներից:

- Ինչպե՞ս եք հասկացել, որ նրանք պատկանում են սոցիալապես անապահով ընտանիքի:

- Որո՞նք են այն հիմնական խնդիրները, որոնց առնչվում են տվյալ աշակերտները դասարանում:

- Որո՞նք են այն հիմնական գործողությունները և/կամ մոտեցումները, որոնք իրականացնում եք տարբեր բարդությունը բացահայտելիս (հոգեբանական խնդրի հաղթահարում, ինտեգրվելու բարդության հաղթահարում):

- ❖ Եթե երբևէ չեք առնչվել նման աշակերտների, ապա ինչպիսի՞ քայլեր և/կամ մոտեցումներ կձեռնարկեք՝ լուծելու աշակերտների մոտ առաջացած խնդիրները:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

- Երբևէ ունեցել էք ազգային փոքրամասնություններին պատկանող և/կամ սփյուռքահայ աշակերտներ:
- Ինչպե՞ս էք հասկացել, որ պատկանում են ազգային փոքրամասնությունների և/կամ սփյուռքի /տեղամասեր, հաղորդակցվել էք ծնողների հետ և այլն/.
- Ինչպիսի՞ն է եղել դասարանում այլ աշակերտների հետ նրանց փոխհարաբերությունը՝ շփում, համագործակցություն, դասարանական միջոցառումներ և այլ:
- Ինչպիսի՞ խնդիրներ էք բացահայտել: Որպես մանկավարժ՝ ո՞րն է եղել Ձեր հիմնական մոտեցումը:
- ❖ Եթե նախկինում չէք ունեցել ազգային փոքրամասնություններին/սփյուռքին պատկանող աշակերտներ, ապա ինչպիսի՞ քայլեր կձեռնարկեք ստորև խնդիրներ առաջանալու դեպքում.
 - Աշակերտներ խուսափում են շփվել նրանց հետ՝ փորձելով պիտակավորել, միասին դասարանական հավաքույթներ անցկացնել և այլ: